ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Պետական գույքի կառավարման կոմիտեի
Քարտուղարության արտաքին կապերի և ինֆորմատիկայի բաժին ներգրավված
փորձագետ Մարիամ Ստեփանյանի 2021թ. մայիսի 13-ից նոյեմբերի 15-ն ընկած
ժամանակահատվածի համար

Պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նախագահի 2021 թվականի մայիսի 4-ի «Փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 114-Ա հրամանով (այսուհետ՝ Հրաման) հաստատված աշխատանքային ծրագրերն իրականացնելու նպատակով, 2021 մայիսի 13-ից ընդգրկվել եմ Կոմիտեի Քարտուղարության արտաքին կապերի և ինֆորմատիկայի բաժնում որպես փորձագետ (հիմք՝ 13.05.2021 թվականին կնքված պայմանագիր № 8):

Համաձայն Հրամանով հաստատված հավելվածի 4-րդ կետի՝ ներկայացնում եմ 13.05.2021-15.11.2021 թվականների ընկած ժամանակահատվածում իմ կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները՝

- Կոմիտեի պաշտոնական info@spm.am էլեկտրոնային փոստի միջոցով ստացվող և առաքվող գրությունների իրենց հասցեատերերին տրամադրում,
- առցանց հայտարարությունների տեղադրման իրականացում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության www.azdarar.am հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում,
- Կոմիտեի ստորաբաժանումների հետ համագործակցություն՝ լրատվական դաշտի, հասարակական սեկտորի, քաղաքացիների տեղեկատվական պահանջները բավարարելու նպատակով,
- Կոմիտեի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության հրապարակում պաշտոնական կայք-էջում,
- գործավարության կարգի պահանջներին համապատասխան Կոմիտեից առաքվող և մուտքագրվող օտարալեզու փաստաթղթերի հայերեն թարգմանության իրականացում,
- նախարարական կոմիտեների նիստերի օրակարգում ընդգրկված Կոմիտեի կողմից մշակված հարցերի ելույթների տեքստերի էլեկտրոնային առաքում ՀՀ ՏԿԵՆ,
- բաժնի կանոնադրական խնդիրներից բխող այլ գործառույթների իրականացում,
- անմիջական ղեկավարի կողմից տրված այլ հանձնարարականների իրականացում:

Քարտուղարության արտաքին կապերի և
ինֆորմատիկայի բաժնի փորձագետ

Մարիամ Ստեփանյան

15 նոյեմբերի 2021թ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Պետական գույքի կառավարման կոմիտեի արտաքին կապերի և ինֆորմատիկայի բաժնի փորձագետ Մարիամ Ստեփանյանի կողմից հաշվետու ժամանակահատվածում՝ 2021 թվականի մայիսի 13-ից մինչև նոյեմբերի 15-ը կատարված աշխատանքները գնահատվում են _____լավ_____ :

/բավարար, լավ կամ գերազանց/

Քարտուղարության պետ

/գնահատող պաշտոնատար անձի պաշտոնը/

Նորա Մելքոնյան _____

/անուն, ազգանուն/ /ստորագրություն/